

10 սպիտակը մի դահեկան է: Մի ուրիշ անգամ տասն հազար սպիտակի դէմ համաձայնում են տալ քառասուն ժամ, ուրեմն $40 \times 20 = 800$ դահեկան: Տասն հազար սպիտակ = ութ հարիւր դահեկան. հետեւաբար՝ մի դահեկան կ'արժէ $12\frac{1}{2}$ սպիտակ: Դահեկանն՝ ոսկի դրամ է, սպիտակը՝ արծաթ: Ոսկէ եւ արծաթէ դրամների այս յարաբերութիւնը ($1 = 10$ կամ $12\frac{1}{2}$) հաստատուում է ուրիշ աղբիւրներից: Յիշենք նաեւ որ 40 դուկատը պարտադրում է 2 ժամ, այսինքն 40 դահեկան, որից երեւում է որ դուկատը ոսկի դրամ է հաւասար դահեկանի: Այս եւ նման անսպասելի եւ կարեւոր հետեւութիւնները պահանջում են որ արձանագրութիւնները որքան հնարաւոր է խնամքով հրատարակուին: 2. Գարեգինը սովորութիւն ունի երբեմն նկատողութիւններ դնել արձանագրութիւնների բնագրում հարցական նշաններով եւ կամ մեկնութիւններ տալով: Կարծում եմ, որ հրատարակութեան միջոցին, ձեռնպահ պէտք է մնայ այս ձեւից եւ իր ասելիքը ղետեղէ բնագրից դուրս ստորեւ նկատողութեանց եւ ուղղումների բաժնում: Կասկած չունինք որ հրատարակութիւնը կը պատասխանէ ժամանակակից պահանջներին* եւ կը դասուի որպէս մնայուն գործ 2. Գարեգինի միւս աշխատութիւնների շարքին: Պէտք է խոստովանիլ, որ Սրբազանի գրեթէ բոլոր բանասիրական եւ պատմական վաստակները յարատեւ լինելու բացառիկ բախտ ունին, սկսած իր անդրանիկ գործից՝ Սասմայ Ծոներ, հրատ. 1891 թ. մինչեւ Խաղրակեանքներին նուիրած վերջին

*Աւագ այդ հնարաւոր չէ մեզ նման անհատի համար, այլ պետութեան, որովհետեւ մեծ ծախսեր են հարկաւոր բազմատեսակ կցումների (ligatur) համար յատուկ կազմարաններ պատրաստել: ՀԵՂԻՆԱԿ

աշխատութիւնը: Գարեգին Սրբազանը չէ սիրում շքեղ կոխտած տափերի վերայ եւ ո՛չ եռանդ թափել անլուծանելի խնդիրների շուրջը, այլ հետամուտ է եղել միշտ նորութիւններ բերել հայ բանասիրութեան: Առաջին երկը արդէն բնորոշել եւ նախագծել են նրա հետաքրքրութեան եւ նախասիրութեան դաշտերը ու առաւելապէս հայ ժողովուրդի ստեղծագործութեան գեղեցիկ արուեստների աշխարհում: Կէս դար շարունակ հետեւել է միանգամ գծած ուղիին անվրէպ եւ անչեղ, հետեւել է ղեզուս սիրով եւ անընկճելի եռանդով, առանց երբեք թերանալու իր եկեղեցականի ծանր պարտականութեանց մէջ: Գլխաձորի դպրոցի այսօրուան ուսումնասիրողը, կարելի է ասել առանց չափազանցութեան, աւելի իրաւունք ունի քան որեւէ ուրիշը, համարուիլ նոյն դպրոցի հայրենաշունչ ոգու եւ նորա շուրջը ղեզերող սրբակրօն վանականների հեռաւոր աննդապահը ո՛չ միայն իր գիտական պատրաստութեամբ, այլ եւ կրօնաւորի անաղարտ վարքով: «Վարդապետ կոչեմ ոչ զայն, ասում է Գլխաձորի իմաստութիւնը, որ բազում բանս ի բերան առնու, այլ որ մաքուր վարս ստացեալ ունի»: Այս կրկնակի նկատումով «Թարգմանչաց-Դուրեան մրցանակը աւելի արժանաւոր թեկնածու չէ կարող ունենալ քան ներկայացուցած աշխատութեան հեղինակ Գարեգին Արքեպիսկոպոսը, հայ եկեղեցու եւ գիտութեան աննկուն սպասաւորը:

Ոսօքս երկարացաւ թէեւ երկարաբանութիւն պէտք չէր, թո՛ղ ներող լինի Ձերդ Սրբազնութիւնը եւ ընդունէ յարգալիր ողջոյններիս հետ բարեկամութեանս եւ պատրաստակամութեանս հաւաստիքը:

Օրհնութիւնդ հայցող եւ միշտ անձնուէր
 18 Յուլիսի 1936
 Բրիւսէլ
 Ն. ԱՂՈՆՑ

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ Ք

Սոյն աշխատութեան մասին Տ. Մկրտիչ Արքեպիսկոպոս Աղաւնուհիի «Դուրեան Գրական Մրձանակարաշխութեան առթիւ կարդացուած» փառից*:

«Գեր. Տ. Գարեգին Ս. Արքեպիսկոպոս Յովսէփեան կը ներկայացնէր Մրցանակի յարմար հմտալից գործ մը «Հոգեւոր Կեդրոններ եւ Գլխաձորի Բարձր Դպրոցը Պոօշեանց Իշխանութեան մէջ»...»

... Տ. Գարեգին Սրբազանի գործին քննիչը շատ ձեռնհասօրէն կը գնահատէ Սրբազանին ներկայացուցած նիւթը եւ անոր մասին ի յայտ բերած յայտնութիւնները:...

...Նորին Սրբազնութիւնը լիապէս բժրունած է թէ

*Սիւն. 1936, Դեկտ. 363:

Հայ Մշակոյթը կը ճոխանայ առաւելապէս բանահաւաքութեամբ կամ պրպտումներով:...

Դեռ Սարկաւազ՝ յօրինած է Սասմայ Ծոներ 1892, Փշրանքներ Ժողովրդական Բանահիւսութիւնից 1892: Իր վարդապետութեան՝ Ռոստամ-Չալ 1901, 1904, 1905, Ոտտակերաց Ս. Նշան 1912, Չազավանից Ժողովրդ 1913, Գրչութեան Արուեստը Հին Հայոց մէջ 1913: Իր եպիսկոպոսութեան՝ Ազիրէկենք եւ Նրանց Ծինարարական գործը 1921, Սաղբակեանք կամ Պոօշեանք Հայոց պատմութեան մէջ 1928: Այս գործերէն դուրս ունի նաեւ բանահաւաքութեան մասին շահեկան յօդուածներ՝ հրատարակուած այլ եւ այլ հանդէսներու մէջ, զոր չեմ յիշեր հոս, ինչպէս նաեւ իր բազմաթիւ ձեռագրական աշխատանքները՝ պատրաստ հրատարակութեան: